



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏ, 2024

## ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 16

### ԱՂՈԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

**Պ**ահպանէ զիս, ով Աստուած, քեզի ապաւինած եմ:

Տիրոջ ըսի.- «Դուն ես Տէրս, քեզմէ զայր ուրախութիւն չունիմ»:

Ինչ փառահեղ են երկրի վրայ սուրբերը,

ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:

Բազմաթիւ ցաւերով պիտի հարուածուին անոնք՝

որոնք ուրիշ աստուածներու երեւէն կը վագեն.

բայց ես գոհերու արիւն պիտի ջնձայեմ անոնց,

անոնց անունն իսկ բերանս պիտի չառնեմ:

Տէր, դուն ես իմ ժառանգութիւնս, ինձի վիճակուած բաժինը,

եւ իմ բաժինս դուն պիտի փաս ինձի:

Ինձի ելած վիճակը ինչ հաճելի է ինձի,

իրաւամբ շնորհք մը՝ որ զիս խնդութեամբ կը լեցնէ:

Կօրինաբանեմ Տէրը, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ զիս,

նոյնիսկ գիշերը զիս կը խրափէ խղճմբանքիս միջոցաւ:

Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.

երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:

Ահա թէ ինչու սիրաս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է,

եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի, որովհետեւ զիտեմ թէ զիս

մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,

եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:

Կեանքի ճամբան ցոյց կու փաս ինձի.

ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,

եւ քու մօտդ ըլլալը յաւեր երջանկութիւնն է:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Վմենասուրբ Երրորդութիւնն, սուր աշխարհիս խաղաղութիւնն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւնն, ննջեցելոց արքայութիւնն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պ**ահպան ամենայնի Բրիստոս,

*աջ ճո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,*

*ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,*

*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*

*եւ ողորմեա՛ ճո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*